Հասցեատեր՝

«Շիրակ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ rouben.hakobyan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30.08.2023թ.

Վարույթ՝	ՊԼ-021
Խախտում՝	«Շիրակ ՖԱ» ՀԿ աշխատակից Սուրեն Սիմոնյանի խաղադաշտ ներխուժելը, Խաղի չորրորդ պաշտոնյային հայհոյելը, հարվածելու փորձ կատարելը (Հավելված 1 Ա, 17 և 32-րդ կետեր) «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Ժորա Սիմոնյանի կողմից մրցավարին հարվածելու փորձ կատարելը (Հավելված 1 Ա, 32-րդ կետ) «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Լյովա Կարապետյանի կողմից չորրորդ պաշտոնյային հարվածելու փորձ կատարելը (Հավելված 1 Ա, 32-րդ կետ)
Առաջնություն՝	IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝	«Շիրակ»-«Ուրարտու» (0:2), 26.08.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահը որոշեց՝

1. «Շիրակ ՖԱ» ՀԿ աշխատակից Սուրեն Սիմոնյանի նկատմամբ կիրառել ժամանակավոր միջոց՝ զրկել վերջինիս ծառայողական պարտականությունները կատարելուց 10 օրով, այդ թվում արգելել մարզադաշտ մուտք գործել 10 օր ժամկետով՝ սկսած 2023 թվականի օգոստոսի 31-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 9-ը կամ մինչև թիվ ՊԼ-021 վարույթով համապատասխան որոշում կայացնելը:
2. «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Ժորա Սիմոնյանի նկատմամբ կիրառել ժամանակավոր միջոց՝ զրկել վերջինիս ծառայողական պարտականությունները կատարելուց 10 օրով, այդ թվում արգելել մարզադաշտ մուտք գործել 10 օր ժամկետով՝ սկսած 2023 թվականի օգոստոսի 31-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 9-ը կամ մինչև թիվ ՊԼ-021 վարույթով համապատասխան որոշում կայացնելը:
3. «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Լյովա Կարապետյանի նկատմամբ կիրառել ժամանակավոր միջոց՝ որակազրկել 10 օրով, այդ թվում արգելել մարզադաշտ մուտք գործել 10 օր ժամկետով՝ սկսած 2023 թվականի օգոստոսի 31-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 9-ը կամ մինչև թիվ ՊԼ-021 վարույթով համապատասխան որոշում կայացնելը:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահի կամ նրա կողմից որոշված անձի կողմից նշանակված ժամանակավոր միջոցները կարող են բողոքարկվել Կանոնակարգի դրույթներին համապատասխան: Այնուամենայնիվ, բողոքարկումը պետք է գրավոր և հիմնավոր ներկայացվի ՀՖՖ բողոքարկման կոմիտեին բողոքարկվող միջոցի մասին ծանուցումից հետո երեք օրվա ընթացքում: Տվյալ բողոքներով բողոքարկման վճար չկա: Բողոքարկման կոմիտեի նախագահը կամ նրա կողմից առաջադրված անձը որոշում է կայացնում նման բողոքների վերաբերյալ միանձնյա: Նման որոշումները վերջնական են: